# ԱՐԱՐԱՏՅԱՆ ԴԱՇՏԻ ԳՅՈՒՂԵՐԸ

Երեսնական թվականների կեսերն էին, Հայկական ՍՍՀ Հողժողկոմատի կազմում ստեղծվել էր նախագծային խումբ կոլտնտեսային գյուղերի հատակագծեր կազմելու համար: Հաճախ էինք մեկնում գյուղերը, ծանոթանում իրավիճակին: Այն ժամանակ գյուղական տները գերազանցապես աղյուսաշեն էին՝ հարթ կտուրներով, փողոցները ծուռումուռ էին՝ խուլ ցանկապատերով, դպրոցական շենքերը փոքր էին՝ քիչ աշակերտներով: Ոչ ամենուրեք ակումբներ կային, նաև գրադարան-ընթերցարաններ: Գյուղն ընդհանրապես չոր ու ցամաք էր. այգիները գյուղի շուրջն էին, անասնապահական շինությունները՝ գոմերն ու մարագները, խոտի, նաև աթարի դեզերը՝ գյուղամիջում:

Գյուղերի խղճուկ տեսքն ու հանրային ընդարձակ դաշտերը հակասության մեջ էին՝ միմյանց անհամապատասխան: Թվում է, թե գյուղերի հատակագծումը ձեռնարկող, այն ժամանակ դեռևս երիտասարդ ճարտարապետներիս գործունեությունը ճիշտ ժամանակին էր կազմակերպվում:

Այդ տարիներին Արարատյան դաշտի երեսունից ավել գյուղերի հատակագծեր և բարեկարգման նախագծեր կազմվեցին ու տեղում կիրառվեցին: Մի քանի տասնյակ գյուղեր վերածվել էին շինարարական հրապարակների: Կավաշեն, չթրծված աղյուսով տները քանդվում էին, առանց որևէ ափսոսանքի զգացում առաջացնելու. նոր փողոցներ էին բացվում՝ ուղիղ և բոլորակ, հասարակական կենտրոնների՝ հրապարակների տեղերն էին նախանշվում, հողամասեր էին հատկացվում մսուր-մանկապարտեզների, դպրոցների և կուլտ-կենցաղային նշանակության հիմնարկների համար, արտադրական հանգույցները դուրս էին բերվում բնակելի տարածություններից, տեղափոխվում տիրապետող քամիների հակառակ կողմը:

Հեշտ չէր այս ամենի իրականացումը, երբեմն հակադրվում և խանգարում էին հատակագծերի կիրառմանը տեղում: Որոշ չափով թերահավատություն

կար այս նոր սկսվող գործի նկատմամբ: Նույնիսկ անհրաժեշտ համարվեց ժամանակավորապես դադարեցնել հատակագծումը, առավել ևս՝ նրանց կիրառումը տեղում:

Կարճ ժամանակ անց, երբ կանաչեցին փողոցների երկայնքով ձգվող նորատունկ ծառերի շարքերը, երբ տեղակայվեցին փողոցների էլեկտրա-լուսավորման սյուները, երբ մասսայական բնույթ ստացավ տուֆակերտ, կղմինդրածածկ բնակելի շենքերի, մանկամսուրների և մանկապարտեզների, դպրոցական շենքերի կառուցումը, պարզ դարձավ, որ Արարատյան դաշտում վեր են խոյանում նոր, սոցիալիստական, բարեկարգ բնակավայրեր:

Այժմ, երբ առիթ է լինում անցնել այդ գյուղերով, ակամայից հիշում ենք գործի սկիզբը, ոչ մի նմանություն այսօրվա և երեսնական թվականների միջև:

Ահա նախկին Սարդարապատը, հին գյուղի տեղում, տողերիս գրողի կազմած հատակագծի հիման վրա բարձրացած նոր, Հոկտեմբեր անունն ստացած գյուղը, իր շքեղ տուֆակերտ կուլտուրայի տան շինությամբ, Էջմիածնի շրջանի Սամաղար, Հայթաղ, Ֆրանգանոց, Արագած, Ղարաղշլաղ, Ներքին Խաթունարխ ծառաստաններով և այգիներով պատված բարեկարգ բնակավայրերը, նույնպես և Արտաշատի շրջանի Այգեստան, Վերին Արտաշատ և Մրգավան, որ սկզբում Գյոդակլու, ապա Մարտիկյան անուններն ունեցավ. գյուղերը, որոնց ծանոթ եմ 1935 թվականից, իսկ վերջին երկուսի հատակագծերը կազմել եմ անվանի ճարտարապետ Գևորգ Քոչարի ղեկավար գործընկերությամբ: Այդ նույն ժամանակ հետաքրքիր հատակագիծ էր կազմել նույնպես անվանի ճարտարապետ Միքայել Մազմանյանը երիտասարդ տաղանդավոր ճարտարապետ Բաբկեն Արարկցյանի գործընկերությամբ:

***Գծ. 1*** *– Սարդարապատ գյուղի հին հատակագիծը:*




***Գծ. 2*** *– Սարդարապատ գյուղի նոր հատակագիծը, 1937 թ.:*

Տարիներ առաջ «Հայհիդրոնախագիծ» ինստիտուտի կոլեկտիվը, որ շեֆական կապի մեջ էր Կոտայքի շրջանի Գառնի գյուղի հետ, ճարտարապետական բաժնի միջոցով, հասարակական կարգով կազմեց նրա հատակագիծը, որի հիման վրա ամբողջությամբ կառուցապատվեց այն, դառնալով ժամանակակից, բարեկարգ, լուսավոր, այգեստան-բնակավայր:

Ամեն կարգի տուրիստներ Գառնիի հուշարձանը այցելելիս, անցնում են փողոցներով, ականատես նրա մաքուր, կանաչավետ իրավիճակին: Պետք է ափսոսալ միայն, որ հատակագծով նախատեսված ավանի մուտքից հուշարձան տանող հատուկ ճառագայթաձև փողոցը թողնվել է մասամբ անավարտ:

***Գծ. 3*** *– Գառնի գյուղի հատակագիծը, 1954 թ.:*

Նույնպիսի շատ հատակագծեր են կազմել ճարտարապետներ Սոս Մանուկյանն ու Սամսոն Սիմոնյանը, Վրույր Սարոյանն ու Արմիկ Հարությունյանը, Վաղարշակ Բելուբեկյանն ու Հայկ Կիրակոսյանը, Ռոզա Գրիգորյանը և ուրիշներ:

Այն ժամանակվա կոլեկտիվ տնտեսությունների մեծ մասը մեր օրերում վերաճել, փոխանցվել է սովետական տնտեսությունների (սովխոզների). այս հանգամանքը նոր թափ է հաղորդել արտադրական բնույթի զգալի ծավալ ունեցող շինությունների կառուցմանը, հասարակական շենքերի և կենտրոնների ստեղծմանը, բնակավայրերի ըստ ամենայնի բարեկարգմանը:

Այժմ բոլորն ունեն մեկ կամ երկհարկ բարեկարգ բնակարաններ, տնամերձ հողամասերում աճած պտղատու ծառեր և խաղողի այգիներ:

Մի ժամանակ Արարատյան դաշտի գյուղերը խմելու բարձրորակ ջուր չունեին, օգտվում էին ոռոգման ջրատարներից: Այժմ լիուլի խմում են Արագածի աղբյուրներից նորակառույց ջրմուղներով բերվող, նաև արտեզյան ջրհորներից շատրվանող ստորգետնյա քաղցրահամ, զուլալ, սառնորակ ջուրը:

Գյուղը գոմաղբից պատրաստված վառելիք՝ աթար էր օգտագործում: Այժմ գազ է եկել, խոհանոցներում գործում են գազօջախները, լոգարաններում՝ ջրի ջեռուցման սարքերը, տներում տեղադրվել են հեռախոսներ, անց է կացվել տրանսլյացիոն ցանց, բոլորն ունեն հեռուստացույցներ, ոմանք՝ գունավոր ցուցադրման: Զգալի թիվ են կազմում ընտանիքներ, որոնք գնել են անձնական օգտագործման ավտոմեքենաներ (ինքնաշարժեր):

Ընդհանրապես փոխվել է գյուղական համայնքի անձնական կազմը, այժմ անգրագետ մարդ չկա. գերազանցապես միջնակարգ կրթության մարդիկ են, շատերը տիրապետում են գյուղատնտեսական ժամանակակից տեխնիկային, օգտագործում, ղեկավարում են բարդ մեքենաներ:

Ինչպես տեսնում ենք, նորացել է գյուղի աշխատավորի կենցաղը, բնույթով ու մակարդակով բարձրացել, մոտեցել քաղաքին:

Գյուղերի, սովխոզների հատակագծման գործն այժմ ավելի բարձր մակարդակով է տարվում հանրապետությունում գործող գյուղական շինարարության նախագծման հատուկ ինստիտուտի կողմից, որտեղ աշխատում են մեծ փորձ կուտակած ճարտարապետներ, ինչպես Սարգիս Կարապետյանն է և ուրիշներ, նաև երիտասարդ շնորհալի ճարտարապետներ և այլ մասնագիտությունների տեր աշխատավորներ:

Այդ ինստիտուտում են մշակվում գյուղերում կառուցվող բոլոր շինությունների նախագծերը և տիպայինների տեղայնացումը: Բնակավայրերի հատակագծումը շարունակվում է նաև այժմ՝ մեր օրերում: Նկատվում է սակայն, որ ավելի շատ վերակազմվում են արդեն մի անգամ հատակագծված գյուղերը, քան բոլորովին չունեցողները: Թվում է թե պետք է ուժերը կենտրոնացնել մինչև այժմ հատակագիծ չունեցող մեր բազմաթիվ գյուղերի բարեկարգման նախագծերի ստեղծմանը:

Մեր գյուղերում տարվող շինարարությունը փոխել է իր երբեմնի տնայնագործական բնույթը: Այժմ կառուցումներն իրականացնում են գյուղական շինարարության մինիստրության բազմաթիվ կազմակերպությունները, որոնք ունեն համապատասխան տեխնիկա ու միջոցներ:

Ժամանակակից հայկական սովխոզային գյուղերում ստեղծված են ու գործում են արտադրական նշանակալից ձեռնարկություններ և գործարաններ, որոնք մշակում են իրենց բազմաճյուղ տնտեսության արտադրած մթերքները, պատրաստում պահածոներ, որոնք առաքվում են նաև հանրապետության սահմաններից դուրս:

Արդ, ինչպես կարող եմ առանձնահատուկ հրճվանք չապրել, երբ առիթ է ստեղծվում օդանավով ուղևորվելիս նայել Արարատյան դաշտին, նրա ջրատարների և ճանապարհների հանգույցներում տեսնելով մեր նորաշեն բնակավայրերը միմյանցից տարբեր, ամեն մեկն իր յուրօրինակ պարագծերով, որ կանխորոշվել են տասնյակ տարիներ առաջ մեր ստեղծած հատակագծերով: